

ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԱՀԱՆ ԿՈՍՏԱՆԵԱՆ.

«ԱԶԵՐՊԱՅՃԱՆ ԴԻՏՄԱՄԲ ԶԻ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՅՆԵՐ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ»

Հայաստանի Արտաքին գործոց փոխնախարար Վահան Կոստանեան Դեկտեմբեր 19-ին BBC-ին տուած հարցազրույցին անդրադարձած է Երեւան-Պաքու յարաբերութիւններու կարգաւորման հոլովոյթին, Հարաւային Կովկասի զարգացումներուն:

Ան նշած է, թէ Ազերպայճան կը յայտարարէ, որ շահագրգռուած է Հայաստանի հետ խաղաղութեան պայմանագիր կնքելով, սակայն, դժբախտաբար, բառերը բաւարար չեն, գործել պէտք է:

«Փաստը այն է, որ Ազերպայճան դժկամութիւն կը ցուցաբերէ միջազգային հանրութեան առաջարկած սկզբունքներու հիման վրայ վերջնականացնելու խաղաղութեան պայմանագիրը», – շեշտած է Կոստանեան, յիշեցնելով որ ազերպայճանական կողմը նախապէս բազմիցս հրաժարած է կարգաւորման ուղղուած բանակցութիւններուն մասնակցելէ:



(DR)

Հայաստանի Արտաքին գործոց փոխնախարար Վահան Կոստանեան Է ճանչնայ Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը եւ այդ հարցին մէջ պէտք չէ անորոշութիւններ ըլլան: Անհրաժեշտ է յստակ սահմանագիծ ունենալ՝ Ալմա Աթա-յի հռչակագրին համապատասխան: Նաեւ հարկաւոր է համաձայնութեան յանգիլ երթեւեկութեան հաղորդակցութիւններու բացման սկզբունքներու շուրջ, որոնք նկատի կ'ունենան եւ կը յարգեն երկիրներու ինքնիշխանութիւնը», – ընդգծած է Արտաքին գործոց փոխնախարարը:

Անդրադառնալով ազերպայճանական կողմի յայտարարութիւններուն, թէ Արցախէն բռնի տեղահանուած Հայերը կրնան վերադառնալ իրենց տունները, եւ թէ Ազերպայճան պատրաստ է ապահովելու անոնց անվտանգութիւնը, Կոստանեան յայտարարած է. «Նախնիներու հայրենիքը լքած Հայերէն ո'չ ոք վերադարձած է այնտեղ, առ այդ կարելի է արձանագրել, որ անոնք ապահովութեան երաշխիքներ չեն տեսներ: Եզրակացութիւնները ձեզի կը թողում»:

Ան աւելցուցած է, թէ այս ամէնը տեղի կ'ունենայ՝ հակառակ Արդարադատութեան միջազգային ատենանի որոշումին, որով Ազերպայճան կը պարտաւորուի ապահովել այդ մարդոց վերադարձի իրաւունքը: ■

ՀԻՔՄԵԹ ՀԱՃԻԵԻ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ

ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՅԸ ԿՐՆԱՅ ԼՈՒԾՈՒԻԼ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԷՆ ԱՆՋԱՏ»

Reuters լրատու գործակալութեան համաձայն՝ Դեկտեմբեր 19-ին Ազերպայճանի նախագահի օգնական, նախագահի աշխատակազմի արտաքին քաղաքականութեան բաժնի ղեկավար Հիքմետ Հաճիեւ Լոնտոնի մէջ լրագրողներուն յայտարարած է, թէ Ազերպայճան իր դրացի Հայաստանի հետ կաշուն խաղաղութեան պայմանագիր կնքելու լուրջ խոչընդոտներ չի տեսներ եւ կը կարծէ, որ իրենց սահմաններու որոշման հարցը կրնայ լուծուիլ անջատաբար:

«ՅՏ-ամեայ հակամարտութիւնը այժմ աւարտած է: Ազերպայճանի ռազմավարութիւնը ներկայիս խաղաղութեան հասնիլն է եւ այդ գործողութիւններ կը պահանջէ երկու կողմերէն: Խաղաղութեան պայմանագիրը հրթիռային գիտութիւն չէ: Ազերպայճանի համար խաղաղութեան օրակարգի ճամբուն վրայ այլեւ խոչընդոտ չկայ», – աւելցուցած է ան: ■

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԶԱԽԱՐՈՎԱ ՅՈՅՍ ՅԱՅՏՆԱԾ Է, ՈՐ ՓԱՇԻՆԵԱՆ Կ'ԵՐԹԱՅ Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿ ՈՒ Կ'ԱՐԾԱՐԾԷ ԶԻՆՔ ՀԵՏԱՔՐՔՐՈՂ ՀԱՐՅԵՐԸ

Ռուսական կողմը կ'ակնկալէ, որ վարչապետ Նիկոլ Փաշինեան կը մասնակցի Ս. Փեթերսպուրկի մէջ Եւրասիական տնտեսական բարձրագոյն խորհուրդի նիստին եւ Անկախ պետութիւններու համագործակցութեան (ԱՊՀ) անդամ երկիրներու ղեկավարներու ոչ- պաշտօնական հանդիպումին: Այս մասին յայտնած է Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովա Դեկտեմբեր 20-ին լրագրողներուն հետ կարճ զրոյցի ընթացքին:



(DR)

«Մենք կը յուսանք, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան կ'օգտուի Ռուսաստանի նախագահի հրաւերէն եւ Դեկտեմբեր 25-26-ին կը ժամանէ Ս. Փեթերսպուրկ, մասնակցելու Եւրասիական բարձրագոյն տնտեսական խորհուրդի նիստին եւ ԱՊՀ-ի անդամ պետութիւններու ղեկավարներու աւանդական նախաամառորեայ հանդիպումին», – կարճ զրոյցի ընթացքին ըսած է Զախարովա:

Ան ընդգծած է, որ Հայաստանի վարչապետին նման այցը կարելիութիւն պիտի ընձեռէ «արժարձելու հետաքրքրող բոլոր հարցերը»:

Նշենք, որ նախապէս ալ Ռուսաստանի նախագահ Փութին յայտարարած էր, որ կ'ակնկալէ հանդիպիլ ԱՊՀ-ի երկիրներու ղեկավարներուն հետ, վերոնշեալ նիստերուն առիթով: ■

ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԱԾ Է ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԽՈՒՄԲԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Դեկտեմբեր 20-ին, վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Միջազգային ճգնաժամային խումբի նախագահ Գոմֆորթ Էռոն:



(DR)

Վարչապետին՝ Միջազգային ճգնաժամային խումբի նախագահութիւնը հետ տեսակցութեան:

«ՆՈՐ ՅԱՌԱՋ» ԼՈՅՍ ԶԻ ՏԵՄՆԵՐ

Ֆրանսայի մէջ Սուրբծննդեան տօնին պատճառով «Նոր Յառաջ» լոյս չի տեսներ Երեքշաբթի, Դեկտեմբեր 26-ին:

Մեր յաջորդ թիւը՝ Հինգշաբթի, Դեկտեմբեր 28-ին:

ԹՈՒՐԻՔԻԱ

ԹՈՒՐԻՔԻՈՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ «ԿԱԶՄԱՅԻՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶԵՐՊԱՅՃԱՆԻ ՄԻՋԵԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՆԿԵՂԾ ԶԱՆՔԵՐՈՒՆ»

Դեկտեմբեր 16-ին, Թուրքիոյ Պաշտպանութեան նախարար Եաշար Կիլիշեր տարեվերջի իրադարձութիւնները ամփոփող հանդիպում ունեցած է լրագրողներու հետ եւ պատասխանած անոնց հարցումներուն:

Ան նշած է, թէ իրենք միշտ ալ «Ազերպայճանցիներու կողքին եղած են՝ անոնց արդար պայքարին մէջ», շեշտելով, որ 2023-ին Ազերպայճանի զինուժին հետ 14 միատեղ ռազմափորձերու մասնակցած են:

«Կովկասի մէջ անվտանգութեան եւ խաղաղութեան հաստատումը կարելի պիտի ըլլայ Ազերպայճանի ու Հայաստանի միջեւ համապարփակ եւ մնայուն խաղաղութեան պայմանագրին միջոցով: Կ'աջակցինք այդ ուղղութեամբ տարուող անկեղծ ջանքերուն եւ կը փափաքինք, որ ան կարելիին չափ արագ հանգուցալուծուի: Կ'ողջունենք երկու երկիրներու վերջին օրերուն կայացուցած որոշումը՝ փոխադարձ վստահութեան ամրապնդման ուղղուած քայլերու առումով», — յայտարարած է Թուրք նախարարը: ■

Զրուցակիցները քննարկած են տարածաշրջանային իրավիճակին վերաբերող հարցեր: Անոնք անդրադարձած են Հարաւային Կովկասի կայունութեան ու մնայուն խաղաղութեան հաստատման կարելիութիւններուն, Հայաստան-Ազերպայճան յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին ու վերջին զարգացումներուն:

Վարչապետը ներկայացուցած է հայկական կողմի կեցուածքը՝ խաղաղութեան պայմանագրի սկզբունքներուն շուրջ:

Միտքեր փոխանակուած են նաեւ Ազերպայճանի կողմէ ցեղային զտման ենթարկուած եւ Արցախէն բռնի տեղահանուածներու մարդասիրական խնդիրներուն, անոնց լուծման ուղղութեամբ Հայաստանի կառավարութեան իրագործած ծրագրերուն շուրջ: Երկուստեք ընդգծուած է միջազգային հանրութեան աջակցութեան կարեւորութիւնը:

ԳՈՄՖՈՐԹ ԷՌՕ ԱՅՅԵԼԱԾ Է ՀԱՅ-ԱԶԵՐՊԱՅՃԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ

Նոյն օրը, Միջազգային ճգնաժամային խումբին նախագահը՝ Հայաստան հաստատուած եւրոպական Միութեան առաքելութեան ներկայացուցիչներուն հետ այցելած է հայ-ազերպայճանական սահմանը:



«Ապշեցուցիչ է տեսնել, թէ որքան մօտ են երկու կողմերու մարտական դիրքերը», — X-իը էջին գրած է տիկին Էնօ: ■

NOR HARATCH

Journal trihebdomadaire en langue arménienne

Journal édité par SARL NorH Publications — 3, rue Charrier, 94000 Créteil

Adresse postale : NorH Publications — 83, rue d'Hauteville - 75010 Paris

contact@norharatch.com / abonnement@norharatch.com

Directeur de publication : Aram Kerovpyan

CPPAP: 1125 | 90193 / ISSN: 2105-7672

Imprimé et distribué par Eucles Daily — 24, rue Turgot, 75009 Paris

Prix d'Abonnement annuel (France): 250 € / Prix d'Abonnement annuel (Hors France): 300 €

Pour les virements bancaires :

SOCIÉTÉ GÉNÉRALE — Agence Paris St Vincent de Paul (03320)

IBAN - FR76 3000 3033 2000 0206 9946 930 / BIC - SOGEFRPP

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԲԱՑՈՒԱԾ Է «ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ ԿՈՐՈՒՍԵԱԼ ԳԱՐԴՄԱՆԷՆ, ՇԻՐՎԱՆԷՆ ԵՒ ՆԱԽԻՋԵԻԱՆԷՆ» ԽՈՐԱԳՐՈՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Դեկտեմբեր 19-ին, Հայաստանի Պատմութեան թանգարանին մէջ բացուած է «Ինքնութեան մասունքներ կորուսեալ Գարդմանէն, Շիրվանէն եւ Նախիջեանէն» խորագրեալ առժամեայ ցուցահանդէսը՝ նուիրուած պատմական Հայաստանի կորուսեալ տարածքներու հայկական մշակութային ժառանգութեան:



Բացման արարողութեան ներկայ եղած են Կրթութեան, գիտութեան մշակույթի եւ մարզանքի փոխնախարարներ Ալֆրեդ Քոչարեան, Արթուր Մարտիրոսեան, Դանիէլ Դանիէլեան, ինչպէս նաեւ Ազգային ժողովի երեսփոխաններ, պաշտօնական անձեր, մշակութային գործիչներ եւ արուեստասէրներ:

Ցուցադրութեան ներկայացուած է Նախիջեանի, Գարդմանի եւ Շիրվանի հայկական մշակութային ժառանգութիւնը փաստող մեծարժէք ընտրանի, ներառեալ՝ պատմական քարտէսներ, միջնադարեան կոթողներ, գորգեր, զարդեր, լուսանկարներ: Ցուցահանդէսին նպատակն է ներկայացուած նմուշներու միջոցով լայն հասարակութիւնը անգամ մը եւս իրազեկ դարձնել իր հայրենի բնօրրանին մէջ հայ ժողովուրդի ստեղծած ինքնատիպ մշակույթին եւ անոր սպառնացող վտանգներուն մասին:

Նշենք, թէ ցուցադրութիւնը կազմակերպուած է Հայաստանի Պատմութեան թանգարանի եւ «Գարդման-Շիրվան-Նախիջեան» համահայկական նորաստեղծ միութեան համագործակցութեամբ: ■

ԼՈՆՏՈՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՆՈՐ ՇԷՆՔԻՆ ՄԷՋ

Դեկտեմբեր 15-ին, Միացեալ Թագաւորութեան մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան նոր շէնքի յարկին տակ ամանորեայ տօներուն ընդառաջ կազմակերպուած է ընդունելութիւն՝ բրիտանահայ համայնքի ներկայացուցիչներու մասնակցութեամբ:



Դեսպան Վարուժան Ներսէսեան կ'արտասանէ իր խօսքը

և խորհրդանշական քայլ մը:

Ան շնորհակալութիւն յայտնած է հայ համայնքին՝ անցնող 30 տարիներուն Հայ տան մէջ դեսպանութիւնը հիւրընկալելուն համար:

Նոյն օրը, նոյն վայրին մէջ տեղի ունեցած է նաեւ Հայաստանի քաղաքացիութիւն ստացած անձերու երգման արարողութիւնը: ■

Դեսպան Վարուժան Ներսէսեան շնորհաւորած է համայնքին անդամները դեսպանութեան նոր շէնքը ձեռք բերելու կապակցութեամբ՝ զայն որակելով հայ-բրիտանական յարաբերութիւններու ամրապնդման ուղղուած լուրջ

ՀԱՅԱՍՏԱՆ – ԱՐՑԱԽ

ԹՈՒՄՕ Կ'ԸՆԴԻԱՅՆԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՆԱԽԱԶԵՆՈՒԹԻՒՆԸ՝ ԹՈՒԱՅՆԱՅՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Ստեղծարար արհեստագիտություններու Թումօ կեդրոնը կ'ընդլայնէ Հայաստանի եւ Արցախի պատմամշակութային վայրերու պահպանման ուղղուած նախաձեռնութիւնը՝ թուայնացման միջոցով:



2018-էն ի վեր Թումօ-ի ուսանողները թուայնացուցած են շարք մը հայկական պատմամշակութային յուշարձաններ՝ լազերային սքանաւորման եւ ֆոթոկրամեթրիայի միջոցով: Անոնց մէջ են նաեւ Արցախի կարեւոր յուշակոթողները: 2020-ի 44-օրեայ պատերազմին անմիջապէս յաջորդած շաբաթներու ընթացքին թուայնացուած են 46 պատմամշակութային կոթողներ, 30 ուրիշներ ալ՝ 2022 նոյեմբերին:



Յարզ թուայնացուած է 230 վայր, իսկ յառաջիկայ երկու-երեք տարիներու ընթացքին կը նախատեսուի 300 հայկական յուշարձանի թուայնացումը:


Բարձրորակ եռաչափ օրինակները հանրութեան հասանելի դարձնելու համար 2024-ին կը ստեղծուի առցանց հարթակ:

Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելել՝ <https://tumo.org/hy/armenian-cultural-heritage/>

ՇՈՒԷՏ

ՇՈՒԷՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԹԱԼԱՆՈՒԱԾ ՈՒ ՎԱՆԴԱԼԱԿԱՆ ԱՐԱՐՔԻ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ Է

Շուէտի Սէօտըրթալիէ (Södertälje) քաղաքի հայկական եկեղեցին թաւանուած ու վանդալական արարքի ենթարկուած է: Լուրը կը հաղորդեն շուէտական լրատվութիւնները:



Կանգնիլ դատարկ խորանի առջեւ», – ըսած է եկեղեցւոյ ներկայացուցիչ Ալեքսանդր Շառոյեան:

Ոստիկանութիւնը կը հետաքննէ միջադէպը: ■

ՀԱՆԳԻՍՏ՝ ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ

Դեկտեմբեր 17-ին, Մոնրէալի մէջ վախճանած է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Միաբանութեան երիցագոյն անդամներէն՝ Սուրէն արք. Գաթարոյեան, 84 տարեկանին:

Ան, երկար տարիներ ծառայած է Բերիոյ Հայոց թեմէն ներս, նախքան Մոնրէալ մեկնումը: Պիտի յիշատակուի որպէս շինարար եւ սուրիահայութեան եկեղեցական-ազգային կեանքը պայծառացուցած վաստակաշատ առաջնորդ: ■



ԵՐՈՒՍԱՂԷՄ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՀԱՄԱԽՄԲՈՒԱԾ ԵՆ ՅԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան կայքէջի լրատուութեան կ'իմանանք, թէ Դեկտեմբեր 18-ին, Երուսաղէմի Յունաց պատրիարքարանին մէջ տեղի ունեցած է նշանակալից հանդիպում մը, որու ընթացքին Երուսաղէմի պատրիարքները եւ հոգեւոր պետերը, դեսպանները, գլխաւոր հիւպատոսները եւ դիւանագիտական առաքելութեանց ներկայացուցիչները հաւաքուած են քննարկելու Կազախի մէջ տեղի ունեցող պատերազմին, Երուսաղէմի մէջ ծառացած մարտահրաւէրներուն եւ յատկապէս Սուրբ ծննդեան տօններուն վերաբերող հրատապ հարցեր:



Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան կողմէ ժողովին ներկայ եղած է դիւանապետ Աղան աբեղայ Գոզչեան:

Մտահոգութիւն յայտնելով Սուրբ երկրի մէջ քրիստոնէաներու առջեւ ծառացած մարտահրաւէրներուն, յատկապէս հրեայ ծայրայեղական խումբերու համակարգուած յարձակումներուն վերաբերեալ, հոգեւոր պետերը կոչ ըրած են պահպանելու Երուսաղէմի բազմամշակոյթ, բազմազգի եւ բազմակրօն կարգավիճակը եւ ընդգծած քրիստոնէական թաղամասերու ապահովութեան կարեւորութիւնը:

Քննարկումին առանցքը կազմած է Սուրբ Ծննդեան միասնական ուղերձի ձեւակերպումն ու հաստատումը: Հոգեւոր պետերը խորհրդակցաբար ձեւակերպած են յոյս, խաղաղութիւն եւ հոգեւոր միասնութիւն արտայայտող ուղերձ մը՝ նպատակ ունենալով միասնականութիւն հաղորդել յառաջիկայ Սուրբծննդեան տօնակատարութիւններուն:

Հոգեւոր պետերը Իսրայէլի կառավարութեան խնդրած են արտօնել հոգեւորականներուն մուտքը Ռաբէլի գերեզմանի անցակէտէն, իսկ հաւատացեալ աշխարհականներու համար բանալ Իսրայէլի եւ Բեթղեհէմի անցակէտը (300 կոշտող դարպասը):

Անդրադարձ եղած է նաեւ եկեղեցապատկան գոյքի համար խորայեղական կառավարութեան կողմէ անօրէն կերպով պահանջուող հարկերու հարցին, եւ Հայոց Պատրիարքարանի «Կովերու պարտէզ»-ին շուրջ տեղի ունեցող վերջին դէպքերուն: ■



ՎՐԱՍՏԱՆ

ՌՈՒՍԹԱՎԻԻ ՄԷՋ ԲԱՑՈՒԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՈՒՈՅ ՀԻԻՊԱՏՈՍԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Դեկտեմբեր 19-ին, Վրաստանի Ռուսթավի քաղաքին մէջ տեղի ունեցած է Հայաստանի Հանրապետութեան առաջին պատուոյ հիւպատոսի գրասենեակին բացման արարողութիւնը: Լուրը կը հաղորդէ Վրաստանի մէջ Հայաստանի դեսպանութիւնը՝ Դիմագիրքի իր էջին գրառումով:



(DR)

Արարողութեան ընթացքին ողջոյնի խօսքով հանդէս եկած են Հայաստանի դեսպան Աշոտ Սմբատեան, Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս եպիսկոպոս Դաւթեան, Վրաստանի Արտաքին գործոց նախարարութեան հիւպատոսական բաժանմունքի տնօրէն Կիրակի Տապատաձէ, նորանշանակ պատուոյ հիւպատոս Կիրակի Մայսուրաձէ:

Հայաստանի դեսպանը իր ելոյթին կարեւոր համարած է Վրաստանի մէջ Հայաստանի առաջին պատուոյ հիւպատոսի գրասենեակին բացումը, ընդգծելով հիւպատոսական գործունէութեան նշանակութիւնը յատկապէս Հայաստանի եւ Վրաստանի միջեւ տնտեսական կապերու ամրապնդման եւ միջհասարակական շփումներու առաւել աշխուժացման տեսանկիւնէն:

Ձեռնարկին մասնակցած են Ռուսթավի քաղաքապետարանի եւ վիրահայ համայնքի ներկայացուցիչներ:

ՍՈՒՐԻԱՀԱՅ ԿԵԱՆՔ

ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԶԵՌԱՄԲ ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ ԲԱՑՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԱԾ Է ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ «ԿԻԼՊԵՆԿԵԱՆ» ՍՐԱՀԻՆ

Կիրակի, Դեկտեմբեր 17-ի միջօրէին, Բերիոյ Հայոց թեմի առաջնորդ Մակար եպիսկոպոս Ազգարեանի ձեռամբ հանդիսաւոր բացումը կատարուած է վերանորոգուած «Կիլպէնկեան» սրահին, ներկայութեամբ՝ ձեզիրէի Առաջնորդական փոխանորդ Լեւոն վրդ. Եղիայեանի, Արմէն աբղ. Գալաճեանի, Պապ քհնյ Պէրպէրեանի, շրջանի ազգ. երեսփոխաններու, Գամիշլիի թաղական խորհուրդին, եկեղեցասիրաց յանձնախումբին, ազգա-



(DR)

յին վարժարաններու հոգաբարձութեան եւ տնօրէններուն, կիրակնօրեայ դպրոցի ուսուցչական կազմին, բարեսիրական, մարզական, մշակութային միութիւններու եւ ազգային մարմիններու ներկայացուցիչներուն:

Սրբազան հայրը, ընկերակցութեամբ ձեզիրէի Առաջնորդական փոխանորդին, կտրած է ժապաւէնը եւ բարեկարգուած սրահին մէջ շրջելով իր ուրախութիւնը յայտնած՝ տարուած բժախնդիր աշխատանքին համար:

Սրահի բարեկարգման նախագիծին հեղինակն է երիտասարդ Ռիթա Կարապետեան:

Սրբազան հայրը գնահատած է ձեզիրէի Առաջնորդական փոխանորդին եւ թաղական խորհուրդին տարած աշխատանքը եւ մաղթած, որ գամիշլիահայ միութիւններուն եւ մարմիններուն հետ միասին շահեկան ձեռնարկներ կը կազմակերպուին սրահէն ներս, ա՛լ աւելի պայծառացնելով ազգային-եկեղեցական կեանքը:

Հանդիսութեան աւարտին սարքուած է սիրոյ սեղան մը:

ՓԱՐԻՋ

«ՀԱՐԻԻՐԱՄԵԱՅ ԱՓԱՐԹԷՅՏ»

ԹԱՆԷՐ ԱՔԶԱՄԻ ՆՈՐ ԳԻՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲԵՄԷՆ

Թանէր Աքչամ նոր հրատարակութեամբ մը հանդէս կու գայ՝ «Հարիւրամեայ Ափարթէյտ» (Yüz yıllık Apartheid), որ ծանրակշիռ ամբաստանութիւն մըն է Թրքական Հանրապետութեան վարած մէկզարեայ խտրական քաղաքականութեան, հաստատուած՝ Հանրապետութեան հիմնադրութեան օրերէն: Միջազգային օրէնքով քրէապէս դատապարտելի ու պատժելի քաղաքականութիւն մը, որ կու գայ բարդուելու Թուրքիոյ գործած Յեղասպանութեան, որդեգրած ժխտողականութեան ամբաստանութիւններուն վրայ:

Թանէր Աքչամի նոր գիրքին ներկայացումը, որ կը կրէր՝ «Զարկ տալ Հայոց պատմութեան ըմբռնումին» վերնագիրը, տեղի ունեցաւ Դեկտեմբեր 18-ին, Conseil Français-Arménien (Ֆրանսացի-հայ խորհուրդ) եւ Արմ-Ակադեմիայի կազմակերպութեամբ Ֆրանսայի Խորհրդարանի «Վիլթր» Հիւկօ» սրահին մէջ: Խորհրդարանային այս ձեռնարկին իրենց օժանդակութիւնը բերած էին Ալփ-Մարիթիմի երեսփոխան Էրիք Սիոթի եւ Տիտիէ Բարակեան, որ վերջերս Պուշ-տիւ-Ռոնի շրջանի երեսփոխան նշանակուեցաւ փոխարինելով Սապրինա Ակրէսթի-Ռուպաշը:



© «Նոր Ճառաց»

Զախէն՝ Ալեքսանտր տէլ Վալ, Ալէն Նաւարրա-Նաւասարդեան, Թանէր Աքչամ եւ Դանիէլ Քիւրքճեան

Երեկոյթի բովանդակութիւնը ճոխ էր: Փրոֆ. Աքչամի բանախօսութեան առընթեր խօսք առաւ աշխարհաքաղաքագէտ Ալեքսանտր տէլ Վալ եւ արուեստի ու ընկերաբանութեան դասախօս Ալէն Նաւարրա-Նաւասարդեան, որ իբրեւ նիստավար իր հարցադրումներով եւ եզրայանգումներով վարեց ձեռնարկը:

Բացման խօսքը արտասանեց Դանիէլ Քիւրքճեան, որ յիշեցուց Յեղասպանութեան այժեկականութեան երեկոյթը: Ան նշեց, թէ որքան ալ Հայութիւնը փորձէ զոհապաշտական վիճակէն դուրս գալ, այսուհանդերձ դէպքերը օրակարգի վրայ կը պահեն Յեղասպանութեան թեման, որուն վերջին դրսեւորումը եղաւ Ազերպայճանցիներու ցեղային զտման զոհ Արցախահայութեան արտաքսումը իր բնօրրանէն:

Անշուշտ երեկոյթին գլխաւոր հրաւիրեալը՝ Թանէր Աքչամ շատ նորութիւններ ունէր յայտնելիք: Ափարթէյտի յղացքի նորովի գործածութեամբ հանդէս կու գար, որ իբրեւ եզր մասնաւորապէս գործածուած է Հարաւային Ափրիկէի պետութեան՝ Սեւամորթերու հանդէպ ցեղային խտրական քաղաքականութեան համար: Եւ ահա Թանէր Աքչամ այս եզրը կ'ընդհանրացնէր, ըսելով որ Ափարթէյտը արդի Թուրքիոյ Հանրապետութեան 100-ամեայ պատմութեան սկիզբէն որդեգրուած է եւ մասնաւոր քաղաքականութիւն մշակուած ու կանոնաւոր կերպով գործադրուած է: Ունեցած է իր տեսաբանները եւ գործադրող համակարգը: Աքչամի փաստարկները հարուստ են, խորապէս ուսումնասիրուած: Առաջին ու գլխաւոր հարցումը որ Աքչամ ինքզինքին կը յղէ՝ ինչո՞ւ Թրքական Հանրապետութեան մէջ չկայ եւ չէ եղած բարձրաստիճան դիրք գրաւած հայ զինուորական մը, պետական նախարար մը... ինչպէս որ չէ տեսնուած նաեւ քրիստոնեայ կամ հրեայ զօրավար մը, կամ բարձրաստիճան պաշտօնեայ մը: Այս հարցադրումէն մեկնած՝ ուսումնասիրած է Թրքական Սահմանադրութեան քաղաքացիութեան եւ հպատակութեան յղացքները, ուր կարելի է գտնել խտրականութեան արմատները:

ՓԱՐԻԶ

«ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ՝ ԾՆՆԴԵԱՆ ԼՈՒՍԱՓԱՅԼ ՅՈՅՍ»

ԱՐՑԱԽՅԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ՆՈՒՐՈՒԱԾ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ՝ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱՄԱՐՆԵՐՈՒՆ ՏԱԿ

Ուրբաթ, Դեկտեմբեր 15-ին, Փարիզի Հայ Կաթողիկէ Սուրբ Խաչ տաճարի կամարներուն տակ տեղի ունեցաւ Սուրբ ծննդեան բարեսիրական բացառիկ համերգ մը, ուր Ադամ Պառօ եւ ընկերները երգեցին Հայաստանի հաստատուած Արցախի մանուկներուն համար: Ձեռնարկը կազմակերպուած էր եկեղեցւոյ կողմէ:

Համերգին մասնակցեցան չորս երաժիշտներ. Ադամ Պառօ (պաս, պարիթոն),— որ նաեւ դերասանական իր ձիրքով, յուզական աշխարհով հմայեց ներկաները,— նոյնքան կարող ու արհեստավարժ երգիչներ՝ Թեւոր Սթեֆան Սենեշալ եւ սփորանօ Լօռ Փուասոնիէ, դաշնակի վրայ Սոֆի Փառթուշի ընկերակցութեամբ հանդէս եկան Սուրբ ծննդեան ճոխ երգացանկով, հրաշալիօրէն ներկայացնելով Ծնունդը աւետող դասական նշանաւոր ստեղծագործութիւններ, ինչպէս՝ Շուպերթի «Ալէ Մարիա»-ն եւ այլ երգեր, որոնք շուրջ երկու հարիւր ունկնդիրներ ըմբոշխնեցին:



Սոֆի Փառթուշ, Լոռ Փուասոնիէ եւ Ադամ Պառօ

Նախքան համերգը խօսք առաւ «Հայաստան» հիմնադրամի Ֆրանսայի մասնաճիւղի նախագահ Պետրոս Թերզեան եւ շնորհաւորեց Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ սոյն նախաձեռնութիւնը, որ տեղի ունենալով Հայ ժողովուրդին վիճակած դժբախտ պայմաններու մէջ, հանդիսացաւ պատգամ, որ պէտք չէ ձեռնաձախ նստիլ, այլ հարկ է շարունակել պայքարը: Ելոյթ ունեցաւ նաեւ Ֆրանսայի մէջ Արցախի Հանրապետութեան մնալուն ներկայացուցիչ Յովհաննէս Գէորգեան, շնորհակալութիւն յայտնելով երաժիշտներուն եւ ներկայացման մասնակիցներուն:

Հանդիսութեան փակման խօսքը արտասանեց Ֆրանսայի Հայ Կաթողիկէ Թեմի առաջնորդ Արհ. Եղիա Եպիսկոպոս Եղիայեան:

Նշենք, թէ երեկոյթին հասոյթը ամբողջութեամբ պիտի յատկացուի բռնագաղթած արցախցի երեխաներուն օժանդակող մարդասիրական գործողութիւններուն:

Թ.Շ. ■

Համակարգ մը որ յատկապէս մշակուած է վանելու համար թրքական ծագում չունեցողները, նոյնիսկ թրքացած Հայերն ու օտարները: Եւ տարիներու ընթացքին այս համակարգը խստօրէն վերահսկուած ու կատարելագործուած է:

Հետաքրքրական ու կարեւոր նոր էջ մը կը բացուի Թուրքիան եւ թրքական քաղաքականութիւնը ուսումնասիրողներուն առջեւ: ...Եւ նոր հարցադրումներ, որոնք ի յայտ կու գան այս նոր տեսութեան լոյսին տակ. ի՞նչ հետեւանքներ կրնայ ունենալ այս տեսութիւնը թրքագիտութեան, միջազգային քրէական պատմութեան վրայ. որքանո՞վ Ափարթէյտը Թուրքիոյ գործած Յեղասպանութեան, այնուհետեւ ալ ժխտողականութեան ըմբռնումին նորութիւն պիտի բերէ, ի՞նչ հետեւանքներ պիտի ունենայ Թուրքիոյ մէջ եւ Թուրքիայէն դուրս: Յամենայն դէպս, Եւրոպայի եւ այլ շրջաններու մէջ ապրող թրքական սփիւռքները հասկնալու եւ անոնց ինքնութեանական ու համարկումի քաղաքականութիւնները մեկնաբանելու օգտակար պիտի հանդիսանայ:

ժ. Զ. ■

ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ՊԱՊԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵԿՍԵՋԵԱՆԸ

Հինգշաբթի, Դեկտեմբեր 7-ին, կաթողիկ աշխարհի Ս. Քահանայապետ Փրանկիսկոս պապը Վատիկանի պապական նստավայրին մէջ ընդունեց Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան անդամ Նարեկ արք. Ալեքսէմէզեանը եւ անոր ընկերակցող ազգայինները:

Ջերմ ընդունելութեան ընթացքին Նարեկ արքեպիսկոպոս Ս. Քահանայապետին յանձնեց Ս. Գրիգոր Նարեկացիի «Խրատ ուղիղ հաւատքի եւ առաքինի մաքուր վարքի» գործի նորագոյն՝ գրաբար, աշխարհաբար եւ անգլերէն համատեղ հրատարակութիւնը, քննական աշխատասիրութեամբ հանդերձ, տպուած Երեւան, 2023-ին, «Անկիւնաքար» հրատարակչատան կողմէ, մեկենասութեամբ Արմէն եւ Արտակ Տէօվլէթեան ընտանիքներու:



Նարեկ սրբազան՝ Պապին հետ

Այս հրատարակութիւնը աշխատանքի արգասիքն է Նարեկ սրբազանին, որ 1981-83-ին որպէս վարդապետական աւարտաճառ պատրաստած էր զայն եւ 2002-ին որպէս գիրք հրամցուցած «Բաւատացեալ ընթերցողին եւ հայ մատենագրութեամբ հետաքրքրուած բանասէրին» Ս. Գրիգոր Նարեկացիի «Մատենա Ողբերգութեան» ի գրութեան 1000-ամեակին առթիւ»:

Անգլերէն թարգմանութեամբ համալրուած այս հրատարակութիւնը ձօնուած էր Փրանկիսկոս պապին, որպէս երախտագիտական արտայայտութիւն Ս. Գրիգոր Նարեկացիի Կաթողիկէ եկեղեցւոյ կողմէ «Տիեզերական վարդապետ» հռչակման իր նախաձեռնութեան:

Սրբազան պապը անակնկալի եկաւ իրեն ձօնուած այս գրքին ի տես, իր շնորհակալութիւնն ու քաջալերանքը յայտնեց Նարեկ սրբազանին, իր կարգին յիշատակի նուէրներ տալով Սրբազանին եւ անոր ընկերակիցներուն:


«ԽՐԱՏ»-Ի ՄԱՍԻՆ

Նարեկ արք. Ալեքսէմէզեան այս գրքի ներածականին մէջ կը նշէ հետեւեալ մասնաշաղկապները.:

«Առաջին, կը պարզաբանեմ ուղղափառ հաւատքը եւ անոր դաւանութեան կը հրաւիրէ հայ հաւատացեալը՝ որպէս ճշմարիտ հետեւորդ Աստուծոյ՝ սուրբ եւ անբաժանելի Երրորդութեան:

Երկրորդ, կը մանրամասնէ Ընդհանրական եկեղեցիի վարդապետութեան կենսական երեսները՝ սուրբ մկրտութիւնը, սուրբ հաղորդութիւնը, ապաշխարութիւնը, մեղքերու յարութիւնը ու վերջին դատաստանը եւ երկինքի արքայութիւնը ու յափտեցական կեանքը, որոնք Նիկիոյ Տիեզերական առաջին ժողովին մէջ (325 թ.) բանաձեւուեցան եւ մաս կազմեցին հաւատքի հանգանակին:

Երրորդ, կ'ընդգծէ ուղղափառ հաւատքի եւ առաքինի գործերու փո-



ԼԻՈՆԻ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ԵՒ ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Դեկտեմբեր 17-ին տեղի ունեցավ Լիոնի Սուրբ Յակոբ Մայր եկեղեցու անուանակոչության տօնը եւ մատաղօրհնությունը՝ համակիրներու ներկայությամբ: Այս տարի ալ մեր հաւատացեալ ժողովուրդը անգամ մը եւս իր ջերմ հոգածութիւնը ցուցաբերեց Սուրբ Յակոբ Մօրնայ հայրապետին:



Արարողութեան նախագահեց Յրանսայի Հայոց թեմի բարեխնամ առաջնորդ, հոգեշնորհ Տէր Գրիգոր վարդապետ Խաչատրեան: Պատարագը մատուցանեց եկեղեցու հոգեւոր հովիւ Տէր Իսահակ աւագ քահանայ Հէքիմեան:

խառնչութիւնը՝ որպէս քրիստոնէական կեանքի պտղաբերումիւն ամբողջացուցիչ տարր:

Չորրորդ, կը վերահասատէ, որ մարդ բարոյական էակ մըն է՝ բանական, ցասմնական եւ ցանկական հակումներով առաջնորդուող, եւ ասոնց տրամաբանական հաւասարակշռութիւնը միայն կրնայ իր աստուածահաճոյ եւ քրիստոսատիպ կեանքը ապրիլ՝ առանց տարուբերելու արդարութեան եւ անարդարութեան միջեւ:

Հինգերորդ, կ'ուրուագծէ ճիշդ զգայարաններու ըստ պատշաճի բացումներով եւ փակումներով պայմանաւորուած կեանք մը ապրելու հրամայականը՝ որպէս երկնաւոր Փեսայի՝ Յիսուսի պարգեւած անզուգական փառքին ժառանգութեան նախապայման»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

«Խրատ»ը բաղկացած է 76 գլուխներէ, թուագրուած՝ հեղինակին կողմէ:

Իւրաքանչիւր գլուխով աստուածաբանական բացատրութիւններ կու տայ եկեղեցու, Ս. Երրորդութեան Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին, անոնց յատկութիւններուն, մկրտութեան, պատարագի, ապաշխարութեան եւ մեղքերու թողութեան, մեռելներու յարութեան եւ յաւիտենական դատաստանին մասին: Կարելի է զայն նկատել մեր Հաւատամքի մանրամասն մեկնաբանութիւնը:

Յաջորդող գլուխներուն մէջ կը խօսի մոլութիւններու եւ առաքիւնութիւններու մասին, կը նկարագրէ հինգ զգայարաններու յատկութիւնները, զանոնք բանալու եւ փակելու մասին մանրամասն օրինակներով խրատներ կու տայ, կը խօսի արեւոյտեան եւ որկրամոլութեան, կերակուրի տեսակներու եւ պահեցողութեան մասին: Խորհուրդ կու տայ ի՞նչ բարի պարագաներու գործածել ձեռքերն ու ոտքերը եւ ո՞ր պարագաներուն խոստափիլ զանոնք գործածել: Կը բացատրէ անհրաժեշտութիւնը հոգիի եւ մտքի մաքրութեան եւ մաքուր պահպանութեան:

Այս գիրքը կարդալէ ետք սպառիչ բացատրութիւններ կ'ունենանք Հայ եկեղեցու Հաւատամքի, մեղքերու տեսակներու եւ թողութեան մասին:

Կ'արժէ անպայման կարդալ. նարեկացիի բնագիրը ընդամենը 65 էջերէ կը բաղկանայ, որուն կը յաջորդէ ուսումնասիրական բաժին մը, կարելի է մէկ շունչով կարդալ: Շատ դուրսին է ընթերցումը նաեւ անոնց համար, որոնք հայերէն կարդալու դիւրութիւնը չունին: Գլուխները կարճ են, կարելի է ամէն օր մէկ գլուխ կարդալ, այդպէսով զարգացնելով նաեւ հայերէնի ընթերցանութեան կարողութիւնը:

Յաւերժ փառք եւ խունկ Ս. Գրիգոր նարեկացիին: Վարձքը կատար նարեկ արք. Ալեքէմեզեանին:

Գ. Գ. ■

Սուրբ սեղանին կը սպասարկէին սարկաւագաց եւ դպրաց դասը:

Երգեցողութիւնները մեկնաբանութեան եկեղեցու «Կոմիտաս» երգչախումբին կողմէ, խմբավարութեամբ եւ երգչոնահարութեամբ օրդ. Կարինէ Գէորգեանի:

Առաջնորդ հայր սուրբը յաւուր պատշաճի քարոզ խօսեցաւ, շեշտը դնելով հաւատքի յարատեւութեան վրայ եւ ըսաւ. «Նուիրեցէ՛ք առանց փոխադարձը ակնկալելու, Սուրբ Յակոբ Մօրնայ հայրապետի նման պիտի վարձատրուիք Աստուծոյ կողմէ»:

Յաւարտ պատարագի՝ հոգեհանգստեան յատուկ պաշտօն կատարութեան եկեղեցու ծառայող վախճանեալ հոգեւորականներու, սատարողներու, վարչական անդամներու եւ դպրաց դասի մէջ ծառայողներու, նաեւ Տիկնանց միութեան անդամուհիներու յիշատակին:

Ապա տեղի ունեցաւ աւանդական մատաղօրհնութիւնը:

Աւարտին, եկեղեցու հոգեւոր հովիւին եւ ծխական խորհուրդի ատենապետ Ռիշար Դազարեանի առաջարկով, ձեռամբ թեմիս առաջնորդ Սրբազան հօր տեղի ունեցաւ «Սուրբ Վարդան Մամիկոնեան» շքանշանի տուցութեան արարողութիւնը: Պարգեւատրութեան վեց լիոնահայեր՝ երկար տարիներու իրենց եկեղեցանուէր ծառայութեան համար: Սրբատառ պատուոյ գիրքը կարգաց Տէր Իսահակ քահանային:

Շքանշաններ ստացան օրդ. Ալիս Պոտուրեան («Կոմիտաս» երգչախումբի նախագահուհի), օրդ. Կարինէ Գէորգեան («Կոմիտաս» երգչախումբի խմբավար եւ երգչոնահար), բարեշնորհ Վազգէն սարկաւագ Էսքիճեան, պարոն Զենոբ Տէվլէթեան (Սուրբ Յակոբ եկեղեցու հոգաբարձութեան ատենապետ եւ ծխական խորհուրդի անդամ), պարոն Լեւոն Արսէնեան (Սուրբ Յակոբ եկեղեցու դիւանապետ), պարոն Ժան-Ժաք Օսմանճեան (Սուրբ Յակոբ եկեղեցու պատուոյ նախագահ):



Ապա «Կարպիս Մանուկեան» հանդիսասրահին մէջ սարքութեամբ սիրոյ սեղան մը, որուն նախագահեց առաջնորդ Տէր Գրիգոր Խաչատրեան: Ներկայ էին հոգեւոր հովիւը, սարկաւագներ եւ դպիրներ, ծխական խորհուրդի ատենապետը, Խորհուրդի պատուոյ նախագահ Արման Պահատուրեան, Ժան-Ժաք Օսմանճեան, հոգաբարձութեան կազմը եւ երգչախումբին անդամները:

Տէրունական աղօթքէն ետք, շքանշանակիր Լեւոն Արսէնեան արտայայտութեամբ օրուան մեծարեալներու անունով: Ան շնորհակալութիւն յայտնեց անոնց որոնք նախաձեռնարկ հանդիսացան շքանշաններու տուցութեան, խոստանալով շարունակել եկեղեցանուէր ծառայութիւնը:

Յարգանքի տուրք մատուցուեցաւ եկեղեցու նուիրեալներէն օրդ. Սեդա Սուքիասեանի յիշատակին, վերջինիս մահուան 20-րդ տարելիցին առիթով:

Գործադրութեամբ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը՝ փոքրիկներու կողմէ:

Անգամ մը եւս նուիրատուներու առատաձեռնութեամբ, Լիոնահայ Տիկնանց միութեան եւ Կապոյտ խաչուհիներու, նաեւ Սագեան ընտանիքի ժրաջան աշխատանքով պատրաստուած էին մատաղն ու համադամները:

Ուշ ատեն, ուրախ մթնոլորտի մէջ վերջ գտաւ հանդիսութիւնը:



ԱՐՈՒՍԵԱԿ ՏԵՎԼԵԹԵԱՆ ■

Concert exceptionnel
au profit des œuvres caritatives de la CBAF

MILLE ANS DE MUSIQUE ARMÉNIENNE

ՀԱՉԱՐԱՄԵԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺԵՏՈՒԹԻՒՆ

GAVEAU

avec
Astrig Siranossian
Violoncelle et voix

Chouchane Siranossian
Violon

Nathanaël Gouin, Piano
Narek Kazazyan, Qanon
Artyom Minasyan, Duduk

14 janvier 2024
16h

Salle Gaveau
45 rue de la Boétie 75008 Paris

Billetterie: Fnac,
www.sallegaveau.com, 01 49 53 05 07

 **SOLIDARITÉ
AVEC LES REFUGIÉS
D'ARTSAKH**

Exposition

Haut-Karabagh

un patrimoine arménien
en péril



VILLE DE PARIS
PRÉSENTE

**14 décembre 2023
au 15 janvier 2024**
Place de la Bastille

Visites guidées les mercredi
20 décembre, 3 et 10 janvier (13h-14h)

**L'Œuvre
d'Orient**
depuis 1856
au service
des chrétiens d'Orient

oeuvre-orient.fr

DÎNER

UGAB
L'UNION GÉNÉRALE ARMÉNIENNE DE GASTRONOMIE
PARIS

SAVE THE DATE

Dîner de Noël

Vendredi 12 janvier à 19h30

CENTRE CULTUREL ARMÉNIEN ALEX MANOOGIAN
118 RUE DE COURCELLES, 75017 PARIS

COCKTAIL, DÎNER, INVITÉ MUSICAL ET AUTRES SURPRISES

LES BÉNÉFICES SERONT REVERSÉS
AU FONDS HUMANITAIRE MONDIAL DE L'UGAB

JAN.
12
19h30

BILLETTERIE BIENTÔT DISPONIBLE

Erevan Artisan / Ebéniste d'art

30 ans

Restauration de meubles / Tapisserie
Georges ASSADOURIAN



93 rue de la Cosarde, 94240 L'Hay-les-Roses
Tél : 01 45 47 02 49 / 06 08 82 79 81
www.erevan.fr

  Erevan Artisan

IL PESCATORE
Pizza artisanale





Du mardi au samedi
de 12h à 15h / de 19h à 22h
1 rue Marcel Sembat,
94240 L'Hay-les-Roses
Tél : 01 466 466 12

Sur place ou à emporter
**Nous sommes aussi au marché de Bourg-la-Reine,
tous les mercredis et samedis**





Կազմակերպութեամբ Հ.Յ.Դ.Արմեն Գարօ Ենթակոմիտեի տնօրէնի
Organisé par le Comité Armen Karo de la F.R.A.

TABLE RONDE
ԿՆՈՐ ՍԵՂԱՆ

Արցախահայութեան վերադարձի իրաւունքը եւ

LE DROIT DE RETOUR DES
ARTSAKHIOTS ET LE
TRAITÉ DE “PAIX”

«խաղաղութեան» պայմանագիրը

Edgar Elbakyan (politologue-Yerevan)

Tigran Yegavian (politologue-Paris)

Raffi Kalfayan (juriste-Paris)

8 Janvier 2024

A 20h00

17 Rue Bleue, MCA Paris

L'association Sainte-Croix des Arméniens Catholiques
organise

le samedi 13 janvier à 15 heures
la présentation des livres

Parachever un génocide

Mustafa Kemal et l'élimination des rescapés
arméniens et grecs (1918-1922)

Raymond Kevorkian



Rose de Diarbékir

Une passion arménienne

Corinne Zarzavatdjian



Vente et dédicaces



Cathédrale Sainte-Croix des Arméniens de Paris

Dans la salle paroissiale
13 rue du Perche, 75003 Paris
Métro : Filles du Calvaire, Hôtel de Ville ou République

Entrée libre / Verre de l'amitié

Ձեր ծանուցումները եւ գովազդները կրնաք ուղարկել

annonces@norharatch.com հասցէին:

Veuillez envoyer vos annonces à l'adresse ci-dessus

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՐԲՈՑ
ԹԱՐԳՄԱՆՉԱՅ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Քրիստոս ծնաւ
եւ յայտնեցաւ
Օրհնեալ է յայտնութիւնն
Քրիստոսի



ԱՐԺ. Տ. ԱՐԱՄ ՔԶՆՅ. ՂԱԶԱՐԵԱՆ
ԵՒ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆ
ՁԵՐ ՆՈՐ ՏԱՐԻՆ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ
ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ ԾՐԱԳԻՐ

Կիրակի 31 Դեկտեմբեր 2023

Ժամը 10-ին Տարեվերջի Սուրբ Պատարագ
Նոան Օրհնութիւն

Ուրբաթ 5 Յունուար 2024

Ճրագալոյց Սուրբ Ծննդեան
Ժամը 16.30-ին Ընթերցուածք
Ժամը 17-ին Սուրբ Պատարագ

Շաբաթ 6 Յունուար 2024

Սուրբ Ծնունդ
Ժամը 10-ին Հանդիսաւոր Սուրբ Պատարագ
Ջրօրհնէք

Կը պատարագէ եւ Վեհափառ Հայրապետի պատգամը կը փոխանցէ
Մայր Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տ. Արամ Քինյ. Ղազարեան

Կիրակի 7 Յունուար 2024

Յիշատակ Մեռելոյց
Ժամը 10-ին Սուրբ Պատարագ եւ Հոգեհանգստեան Պաշտօն

339 avenue du Prado - 13008 Marseille

Հեռախօս : 04 91 77 84 70

E-mail : contact@cathedrearmeniennemarseille.com



NOR HARATCH

առցանց գրատուն – librairie en ligne

NOUVELLE ADRESSE WEB

LIBRAIRIE
EN LIGNE
DE NOR HARATCH

hratar.com



**ԸՍԷ ԻՆՉ ԿԸ ԿԱՐԴԱՍ,
ԸՍԵՄ՝ Ո՛Վ ԵՍ ԴՈՒՆ**



33 ՁԱՅՆ ԻՍԹԱՆՊՈՒԼԷՆ
Ինչպես ճանչցալ պոլսահայերը
ՍԱՓՕ ԱՐԵԱՆ
Երևան - 2022
20 € (առանց առաքման ծախսերուն)



ՀԱՅ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՏՔԸ
Կազմուած՝
ՎԱՐՈՒԺԱՆ ՍՐԱՊԵԱՆԻ
զլխաւորութեամբ
Ֆրանսերէնէ բարգմանութիւն՝
Արման Շարոյեան
SIGEST - 2022
15 € (առանց առաքման ծախսերուն)



ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ
Եղիշէ ԶԱՐԵԱՆ
«Զանգակ» - Երևան - 2022
20 € (առանց առաքման ծախսերուն)

ՅԱԻԵԼԵԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱՐ ԳՐԵԼ
«ՆՈՐ ՅԱՌԱԶ»-ԻՆ,
ՀԵՏԵԻԵԱԼ ՀԱՍՑԷՈՎ
contact@norharatch.com

Առաքման ծախսերու խնայողութեան համար, կարելի է գիրքերը առնել ուղղակի «Նոր Յառաջ»-ի խմբագրատունէն:
Քանի մը գիրք ապսպրելու պարագային՝ կապուիլ «Նոր Յառաջ»-ին, առաքումի գինը ճշդելու համար:

«Nor Haratch»
83, rue d'Hauteville - 75010 Paris
Tél. 01 55 32 06 72
www.norharatch.com

ՆՅ NOR HARATCH

անցանց գրատուն – librairie en ligne


NOUVELLE ADRESSE WEB

LIBRAIRIE
EN LIGNE
DE NOR HARATCH

hratar.com



ԸՍԷ ԻՆՉ ԿԸ ԿԱՐԴԱՍ,
ԸՍԵՄ՝ Ո՛Վ ԵՍ ԴՈՒՆ




ՅԱԿՈԲՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ՊԸԼՏԵԱՆ

«Զանգակ» - Երևան - 2019

20 € (առանց առաքման ծախսերուն)



ԿԵԱՆՔԻՍ ՅՈՒՇԵՐԸ

ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵՋՅԱՆ

«Թէֆէան» մշակութային միութիւն
Երևան - 2022

20 € (առանց առաքման ծախսերուն)



ԱՐԾԻԻԸ ԻՐ ԲՈՅՆԻՆ ՄԷՋ

– Պատմութիւն կերտողները –

ԱՒԵՏԻՍ ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Երևան - 2022

20 € (առանց առաքման ծախսերուն)

ՅԱԻԵԼԵԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱՐ ԳՐԵԼ
«ՆՈՐ ՅԱՌԱՋ»-ԻՆ,
ՀԵՏԵԻԵԱԼ ՀԱՍՑԷՈՎ
contact@norharatch.com

Առաքման ծախսերու խնայողութեան համար, կարելի է գիրքերը առնել ուղղակի «Նոր Յառաջ»-ի խմբագրատունէն:
Քանի մը գիրք ապսպրելու պարագային՝ կապուիլ «Նոր Յառաջ»-ին, առաքումի գինը ճշդելու համար:

«Nor Haratch»
83, rue d'Hauteville - 75010 Paris
Tél. 01 55 32 06 72
www.norharatch.com

*l'actualité arménienne
en français et en arménien*



de la lecture pour tout le monde!

journal tri-hebdomadaire en arménien
hebdomadaire en français
et abonnement site norharatch.com

image Maïda Chavak

ABONNEMENT FORMULE INTÉGRALE

Trois fois par semaine, **ՄԵԼԻՍ** le journal en arménien

Chaque jeudi, **NH Hebdo** en français, en supplément

Et abonnement à **Nor Haratch** en ligne

250 euros pour la France – 300 euros pour l'étranger

- ☐ Je m'abonne ☐ J'offre un abonnement
☐ Je me réabonne

Nom

Prénom(s)

Adresse

Commune

Email

Téléphone



Chèque à l'ordre de NorH Publications

à envoyer avec la présente fiche

à NORH Publications, 83 rue d'Hauteville, 75010 Paris

Virement bancaire

SOCIÉTÉ GÉNÉRALE -

Agence Paris St Vincent de Paul (03320)

IBAN - FR76 3000 3033 2000 0206 9946 930

BIC - SOGEFRPP

Téléphone : **01 55 32 06 72**

E-mail : abonnement@norharatch.com

ABONNEMENT FORMULE NH HEBDO

Chaque jeudi, hebdomadaire en français **NH Hebdo**

+ le numéro du jeudi en arménien **ՄԵԼԻՍ**

+ abonnement à **Nor Haratch** (en français) en ligne

150 euros pour la France – 190 euros pour l'étranger

- ☐ Je m'abonne ☐ J'offre un abonnement
☐ Je me réabonne

Nom

Prénom(s)

Adresse

Commune

Email

Téléphone



Chèque à l'ordre NorH Publications

à envoyer avec la présente fiche

à NORH Publications, 83 rue d'Hauteville, 75010 Paris

Virement bancaire

SOCIÉTÉ GÉNÉRALE -

Agence Paris St Vincent de Paul (03320)

IBAN - FR76 3000 3033 2000 0206 9946 930

BIC - SOGEFRPP

Téléphone **01 55 32 06 72**

Email abonnement@norharatch.com

*l'actualité arménienne
en français et en arménien*



de la lecture pour tout le monde!

NH Hebdo,
Nor Haratch du jeudi
et site norharatch.com (en français)